ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«26» ապրիլի 2017 թվականի № 54-Հ

«ԱՐՄՕՅԼ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով՝ «Ընդերքը նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով տրամադրելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 1431-Ն որոշման XXVII-րդ բաժնի 75-րդ և 76-րդ հոդվածները, հաշվի առնելով՝ Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը և «ԱՐՄՕՅԼ» ՍՊԸ-ի 2017 թվականի ապրիլի 10-ի թիվ 05 դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԱՐՄՕՅԼ» ՍՊ ընկերությանը տրամադրել հանքային իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման հավաստագիր:

2. Ուժը կորցրած ճանաչել՝ «ԱՐՄՕՅԼ» ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության 1-ին, 3-րդ պայմանական տարածքներում և 5-րդ պայմանական տարածքի 6-րդ տեղամասում նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրության 2013 թվականի ապրիլի 5-ին տրամադրված՝ նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրության ԵՀՈՒԱ-29/003 արտոնագիրն ու լուծել նավթի և բնական գազի ուսումնասիրության թիվ 003 և նավթի և բնական գազի արտադրանքի բաժանման պայմանագրերը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

- 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը հրաժարման հավաստագիրը ստանալու մասին.
- ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ>> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ